Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ԵՑ2 պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 1**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 2. Երևան - 2 ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 03.01.-31.03.2025թթ. |
| Ներկայացման օր | 07.04.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ-հոգեբանական օգնության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 41 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 10 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- **Ազատ ժամանցի կազմակերպման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր և խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող վարժությունների, կապերի ընդլայնման, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 10 խմբակ, որոնց մասնակցել են 41 շահառու:
  - Հայ եկեղեցու պատմություն, կերպարվեստ,
  - Կինեզոլոգիա,
  - Երգ,
  - Խոհարարական,
  - Առողջապահական,
  - Հմուտ ձեռքեր,
  - Գրական,
  - Թանգարանների պատմություն
  - Մարմնամարզություն-պար
  - Կար

  Կենտրոններում կազմակերպվել է թվով 12 միջոցառում (յուրաքանչյուր կենտրոնում 6ական), երեք այցելություն թանգարաններ: Շահառուները մասնակցել տարբեր համերգասրահներում կազմակերպված 32 համերգի:
  Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպված միջոցառումներին մասնակցել են 41 շահառու:

Իրականացված միջոցառումներն են.

- Հանդիպում քահանայի հետ Աջափնյակի և Շենգավիթի ցերեկային կենտրոններում,
- Շախմատի մրցույթ-միջոցառում. Շենգավիթ ցերեկային կենտրոնի ավագ սերնդի և Թիվ 86 հանրակրթական դպրոցի սաների հետ միասին
- Տեառնընդառաջի նշում Աջափնյակ և Շենգավիթ ցերեկային կենտրոններում,
- Շահառուների ծննդյան օրերի նշում,
- Կանանց միջազգային օրվա նշում Աջափնյակի և Շենգավիթի ցերեկային կենտրոններում,
- Մասնակցություն «Նոնենի» ցերեկային կենտրոնում կազմակերպված Թումանյանի ծննդյան օրվան նվիրված միջոցառմանը,
- Այց թանգարաններ.
  - Փարաջանովի տուն-թանգարան,
  - Երևան քաղաքի պատմության թանգարան,
  - Ժամանակակից արվեստների թանգարան,

Մասնակցություն համերգներին

- Ա. Խաչատրյան անվան համերգասրահում. Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, «Հայոց Սբ. Ծնունդ» հոգևոր-դասական երաժշտության համերգ, Հայաստանի Ազգային ակադեմիական երգչախումբ, Հայաստանի Ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ, Հայաստանի Ալթունյանի անվան պետական համույթ, դաշնամուրային երաժշտության երեկո Նվիրված ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Ռաֆայել Պապյանի 100-ամյակին, Հայաստանի «Բարեկամություն» պետական համույթ, Երևանի պետական կամերային երգչախումբ,
- Կոմիտասի անվան Կամերային երաժշտության տանը. հնագույն երաժշտության «Տաղարան» համույթ, կամերային երգչախմբի համերգը նվիրված կանաց միամսյակին, «Արցախ» կամերային նվագախումբ, Հայաստանի կամերային նվագախումբ
- Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում. Ջ.Վերդի «Օթելլո», Հայաստանի պարի պետական համույթ,

- **Աշխատանքային/արտթերապիայի կազմակերպման** շրջանակներում Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է թվով 21 հանդիպում (մասնակիցների թիվ՝ 35 ) ուղղված նյարդային լարված վիճակի թուլացմանը, դրական հույզերի ու մտքերի վրա կենտրոնացմանը, հույզերի բացահայտմանը գույների միջոցով, շարժումների կոորդինացիային, տեսատարածական ընկալմանը, մանր շարժողականությանն ու ուշադրության կենտրոնացմանը:
  Արտթերապիա, վիզուալիզացիա, նեյրոբիկ վարժություններ, պարաթերապիա, հիշողությունը եվ ուշադրությունը ակտիվացնող խաղ-վարժանքներ: Աշխատանք մտքի հետ՝ լավատեսության վերաբերյալ զրույցներ, շնչառական վարժություններ, հույզերի հետ աշխատանք, ինտելեկտուալ խաղեր:
- **Սննդի կազմակերպման** շրջանակներում կենտրոններում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- **Բաղնիքի ծառայության տրամադրում** շրջանակներում թվով 1 շահառու օգտվել է բաղնիքի ծառայությունից, 2 շահառու օգտվել է լվացքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Շախմատի մրցույթ-միջոցառումը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/625464176505739),
- Տեառնընդառաջ. տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/1C1tmxEot2/ ),
- Ծննդյան օրվա նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/1541cZMArV/)
- Կանանց միջազգային օր. (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/15QaTwxUvL/)
- Փարաջանովի տուն-թանգարան, (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/16Gdfm8XmV/ ),
- Պատմության թանգարան, (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/16QsKCBmco/ ),
- Ժամանակակից արվեստների թանգարան, (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0RTQdXDURcjKLWdsnegT8kDUKWg7D6eFQRP9A6syudG5tVcTLK4NbwetpnTuMqDftl&id=100081543423963 ),
- Կինեզոլոգիա (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/1EKU82DZCf/ )
- Պարաթերապիա (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/15subsPzPX/)
- Խոհարարական խմբակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/1671195167089139 )
- Առողջապահական (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/1BK2abLQB8/ ),
- Հմուտ ձեռքեր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/1GcyFWj3wx/ ),

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խոհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ձևաչափ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 40/41 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 36 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 9 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 1 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 9 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 32 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 41 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 41 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 35 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 41 |
| 5.1 | Հայ եկեղեցու պատմություն, կերպարվեստ | 18 |
| 5.2 | Կինեզոլոգիա | 25 |
| 5.3 | Ձեռքի աշխատանք | 18 |
| 5.4 | Երգ | 22 |
| 5.5 | Խոհարարական | 12 |
| 5.6 | Առողջապահական | 20 |
| 5.7 | Գրական | 18 |
| 5.8 | Թանգարանների պատմություն | 8 |
| 5.9 | Մարմնամարզություն/պար | 9 |
| 5.10 | Կար | 2 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 41 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 28 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) Բաղնիքի ծառայություն | 1 |

Կազմակերպության ղեկավար ___*Երվանդ Մխիթարյան*___ «07»04.2025թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)